



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2020 թվականի N 13 -Ա

**«ԲՈՒՆԱԿՈՒԹԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Սյունիքի մարզպետի 2011թվականի հոկտեմբերի 2-ի N145-Ն որոշման հավելվածի 6.2 կետով և հիմք ընդունելով մարզպետի և տնօրենի միջև 2017 թվականի հունվարի 18-ին կնքված N 9 աշխատանքային պայմանագրի 6-րդ կետի 6.1 կետի ա) ենթակետը՝

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

2020թ. հունվարի 20-ից լուծել «Բունակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լյուդմիլա Հարությունյանի հետ 2017 թվականի հունվարի 18-ին կնքված N 9 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

16.01.2020



ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Ինքնագրի համար: POGHOSYAN HUNAN 4005640117

2020թ. հունվարի 16  
ք. Կապան